

420-4



ՀԱՆՈՐ ԽԸ

1891


ՑՈՒՅՈՒԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՈՒՐ ԷՐ ԵՐԿՐԾ. ԽՈՐ ԴՐԱԽՏՆ

(ՑԱՆ ՀԱՅ. ԽԸ յԵլ 441)

893-54



Ո.Ջ.Զին կարծեաց կը յաջորդէ երկրորդն՝ և է Տէլիցի (Փրեդ.)։ Այս հմաւա ասորագէտն՝ կը համարի թէ եղեմայ գաւառն, յորում Աստուած դրաւ զԴրախտն, բարելոնի շրջակայքն գտնուած գաւառն ըԱլայ, որ հին ատեն հաշակեալ էր իւր արգասաւորութեամբն և գեղեցկութեամբ։ Նոյն կողմն ուր Եփրատ և Տիգրիս մերձենալով մի- մեանց առաւելապէս քան այլուր՝ և անթիւ ջրանցքներով հաղոր- դուելով և արդաւանդ առատութեան ժամանակ բոլոր գաշտագետինն կ'ողողեն, կրնանբ ըսել որ մի գետ կը կազմեն, Այս այն միակ զետն էր որ կը մտնէր միանգամայն ռառզելու Եղեմայ այն առանձին մասն՝ զոր Աստուած սահմաներ էր իրը գրախտ վայելից։ Եւ անտի (այս- ինքն Դրախտէն, ըստ Տէլիցի) միակ գետն դուրս ելլելով կը



Printed in Yerevan

բաժնուէր ի չորս գետու : Այս դիւրաւ կը մեկնուի Եփրատ և Ցիդ-
րիս գետերուն համար, որ քիչ հեռու կը բաժնուին ի միմեանց և կը
ստանան իրենց անկախութիւնը : Իսկ Փիսոնի և գեհոնի նկատմամբ,
հեղինակն կը դնէ զանոնք ի կրկին լայնանիստ ջրանցս, որ մասամբ
ընական և մասամբ արուեստական են, և պէտք էին նոյն տեղւոյն
մէջ գտնուածներէն մեծագոյնքն րլային . մին էր Բիշանու, որ Բարե-
լոնի ամենամօտ կը բաժնուի Եփրատոյ անկողմեան եզերէն
և ուղղակի կ'երթայ կը թափի Պարսից ծովուն մէջ . Միւսն էր Կու-
քանու — (այս անոնս գեռ ստուգեալ չէ ասորական արձանագրու-
թեանց մէջ), — որ նոյն Եփրատ գետին ձախակողմեան եզերքէն կը
բաժնուի, և յետ ուոգելու Բարելոնի բովանդակ միջավայրն կը մրտ-
նէ կրկին Եփրատոյ մէջ ուստի ելաւ : Իսկ Եւիլաթ անուամբ պէտք
է իմանալ ասորական անապատին ծայրը, որ Բարելոնի սահմանին
երկայնութեամբ կը տարածուի մինչեւ Պարսկային ծոցն . և Եթով-
պիոյ կամ Քուշաց անուամբ պէտք էր իմանալ զբարելոն իրապէս :
Եւ յիրաւի Ներովիթ որդին Գուշաց, Հիմնեց իւր հոչակաւոր գրլ-
խաւոր քաղաքներն Բարելոն և Երէք ուստի և մերձաւոր Ծյար-
տութեան կ'երեսի որ նոյն կողմերն կանգնեալ ըլլան Ազգատ և Քալ-
նէ : Թողունք արդ զայս կարծիս, զոր Եթէ մէկն ուզէ ընդարձակօրէն
բացատրեալ տեսնել ինչպէս նաև յարակից խնդրոց բացայա-
տութիւններն ալ, կարդայ Տէլիցի զրած Մ՛շր է Դրախտն անուամբ
գիրքն՝ (տպագրեալ Լայպցիկ ի 1881)

Երրորդ կարծիքն կը փոխադրէ զԴիրախտն աւելի ևս գեպ ի հա-
րաւակողմն մինչև Պարսից ծոցին եզերքներն, որ Եփրատ գետն
կը հօսի . բայց հմուտք որ այս կարծեաց հետևողք են՝ չեն համա-
ձայնիր Ս. Գրոց շրմ գետերն որոշելուն մէջ՝ կալվին և իրէ յետոյ
այլք՝ կ'ուղեն գլխաւոր մեծ գետն համարել զՇագ-էլ-Արար .
այս անուամբ կը նշանակուին Տիգրիս և Եփրատ, որ իրարու հետ
խառնուելով կը միանան խուռնա քաղաքն անցնելէ յետոյ . և այս
յոյ ընթացքն՝ ի կրկին բաժնուելով՝ ծով համնելէ առաջ, կը ցուցնէ
այս մեկնըցաց երկու այլ գետեր՝ որոց կարելի է Փիսոն և գեհոն ա-
նուանիքն տալ, թէպէտ միւս կողմանէ ալ չեն համապատասխաներ ա-
մենեկն Մովսեսի տուած այլ մանրամասնութեանց : Ուստի հմուտք,
ինչպէս Բրէսսէլ և Բասք, համարելով իրը գլխաւոր գետ զՇագ-
էլ-Արար, և թողովի բաց այն երկու ստորին թներն, կ'ուզեն գանել
զՓիսոն և զԳեհոն՝ յայնմթափուած երկու ուրիշ գետոց մէջ, որոնք
Առաջանայէ կու գան, և են Քարսոն (Փիսոն) և Գերկա կամ խա-
րասու (Գեհոն) . Այս է ահա ըստ էական մասանց հմուտ Տըսսային
քահանային կարծիքն, յօտաշահ Հաննիսի կարողիկէ աշխարհի,
զոր փութաջան ուսմամբ աշխատասիրած և պարզած է :

Հոս պէտք է նշանակենք որ մովսիսական բնագրին մէջ, ըստ որում

արդի ձեռու ունինք, երկդիմոբանութիւն մը կայ, թէ ինչպէս պէտք է իմանալ այն գետոց շատ անգամ յիշեալ բաժանումն: Մովսէս կը սէ. և եւ գետ ելանէր յեղեմայ ոռոգանել զդրախտն, և անտի բաժառ նի ի չորս առաջն ։ կարելի է իմաստն իմանալ նախ, թէ յեղեմայ առաջ եկած գետն, այսինքն ոյսպէս կոշտած գաւառէն, հազիւ թէ անտի ելած կը բաժնուէր ՚ի չորս ճիւղ դրախտ մննելն առաջ. կամ այս բաժանումն նոյն իսկ դրախտին մէջ կը կատարուէր, կամ վեր ջապէս դրախտէն անցնելէն յետոյ:

Այս երեք իմաստներն ալ ընդունելի կրնան ըլլալ ըստ դատաստանի Ալարիտէի և Բերեյրայ. բայց ով որ լաւ մոտադիր ըլլայ՝ կը տեսնէ որ աւելի կ'ենթադրեն իրենք գետին բաժանումն իւր ընթացից ատորին մասին մէջ, ինչպէս ուրիշ գետոց ալ կը հանդիպի փոքր կերպով, որ մերձ ի բերան՝ հաղոյն գրեթէ հաւասարելով այլ և այլ ճիւղեր կը բաժնուէն, և այսպէս բաժանեալ կը հասնին ի ծովն: Արդ մեր ենթադրութեամբ մէջ, ինդիրն այսպէս պէտք չէ իմանալ, այլ զհակառակն. վասն զի Եփրատ, Տիգրիս և միւս երկու գետերն չեն ձեանար Շագ-էլ-Արաբէ, համարելով զայն դրախտին գետն, մանաւանդ թէ, ընդհակառակն, այս գետն կը ձեւանայ իրենց միաւորութեամբն ի մի անկողին: Ուստի Մովսեսի խօսքերն այս կարծեաց հետ համաձայնեցնելու համար, պէտք է ենթադրել որ Մովսէս չի խօսիր իրական բաժանման վրայ ջրոց ատորին ընթացից մէջ, այլ աշխարհագրական բաժանման վրայ, զոր կարելի է ըմբռնել, թէպէտ չէ այնչափ բնական՝ մոռք հակառակ ընթացք բռնելով գետէն:

Այս մեկնութեանս կը նպաստէ առաջք բառը, որով ջրոյն չորս ճիւղերը կը ցուցընէ, և թէպէտ նոյն բառն կրնայ նշանակել չորս ստորին ճիւղերը. բայց գետոց վրայ խօսուելով՝ աւելի վերին ճիւղերու կը յարմարի, որք են մասն աղբերաց:

Իսկ ծըսսայի տուած մեկնութիւնն հետեւալ բանից՝ նա է որ երբայ յանդիման Ասորեստանի, որովք Մովսէս Տիգրիս գետը կը նկարագրէ, զրեթէ ընդունելի չէ և բռնազրօն է: Վասն զի ըստ այս գիտնականին կարծեաց՝ վերյիշեալ խօսքերուն իմաստն է. նու է որ երբայ ընդ շետան Ասորեստանի, այսինքն, պարտ է ՚ի վեր եկանել ընդ այն առ ՚ի հասանել յԱսորեստան: Բայց հարկ է զիտնալ՝ որ Տիգրիս՝ Ասորեստանի և Ելամայ սահմանագլխոյն վրայ էր, ինչպէս Թիշինոյ գետ՝ ՚ի մէջ Միլանու և Նովարայի, ուստի նոյն իսկ վեր ելլերով Տիգրիսի վրայէն ընդդէմ Ասորեստանի չի կրնար ոք երթաւ անոր քովէն կ'անցնի: Բայց Տէլից ըստ բաւականի ճարտարութեամբ գրութիւն մի հնարեց, որ և առանց բռնազրօսելու կրնայ Տըսսայի կարծեաց յարմար գալ:

Ծնթերցողը կրնայ կարգալ Տըսսայի դրածը Եւիլատայ և Գուշայ

վրայ, զորոնք մասնաւորագէս ուսումնասիրած է. մենք հոս յա-
ռաջ բերենք Տէլիցի ասկէ տասը տարի առաջ ըրած առարկութիւնը,
որ եթէ ըրւծուի, երրորդ գրութիւնն ալ կը խախտի և կը կործանի,
Եւ այս է առարկութիւնն. Այս կողմերս (որոց վրայ է խնդիրն),
Մովսիսի ժամանակ՝ ի ծովէ ծածկուած էր, և գետոց ընթացքն նոյն
չէր հիմակուանին հծոս Այսպէս օրինակ իմն Տիգրիսի և Եփրատայ զե-
տախառնունքը՝ ի Շագ-Էլ-Արար, նոր բան է. և Պլինիոս իսկ կը
վկայէ՝ թէ այս երկու գետերը առաջ ուղղակի ի ծով կը թափէին,
և երկուքին բերաններ ևն հետաւորութիւնը 25 մղոն, կամ ըստ ո-
մանց 7 էր, և հաւանական է թէ Մեծին թղթքսանդրի տառեն գեռ
բաժնուած էին իրարմէ. Արդ ասկէ յայտնի Կ'երևի, որ նոյն իսկ
նախկին Դրախտի տեղոյն մէջ կարգէ դուրս յեղափոխութիւնք ալ
չենթագրելով. նոյն տեղը, յն այժմեան ջրոց դիրքէն չենք կրնար որո-
շել Դրախտին վարը, և Մովսիսի տառեն եղած անոր ջրոցըն թագքը.
այլ պէտք է լաւ քննել անոնց կրած կերպարանափոխութիւնքը դը-
րեթէ քառասուն դարուց մէջ, և յայ է թէ զետք երկիար ժամանա-
կի մէջ այս տեսակ կերպարանափոխութեանց ենթակայ են.

Գալով երրորդ գրութիւնան Դրախտավայրին որչման, այս գրու-
թիւնա՝ հին արձանագիրներէ և այժմեան 4 ննութիւններէ կը հաս-
տատի՝ թէ մեր երկիրը, որ օրըստօրէ Կ'ընդարձակի և զէպ ի ծով
կ'երկընայ գետոց բերած մրուրներովն, հին ատեն բոլորվին ջրով
ծածկուած էր: Եւ հարկ չկայ, կ'ըսեն այս կարծեաց պաշտպանքն,
հին երկրաբանական դարերը քննել ասոր հաստատութեան համար,
վասն զի նոյն տեղը տարիին 22 մեդր կ'ընդարձակի, որ 4000 ամաց
մէջ 88 հազարամեդր կ'ըլլայ, և որ հազիւ կը համապատասխանէ ա-
սորական ցուցակաց տուած նկարագրութեանցը:

Ասոնք են զանազան կարծիք սովորականք Դրախտավայրին վրայ,
որք թէպէտ և խնդիրը բոլորվին չեն պարզեր, բայց շատ տարակայս-
ներ կը փարատեն, և կը հերքեն Հնդկաց, Ովկիանից և Անդրովկիա-
նից գրութիւնքը և կարծիքը, և զմեղ զէպ ի այն կողմը կը ձգեն
որ գրեթէ միշտ մարդկային ազգի խանձարուրք համարուած է: